Իրավունք չունե՞ր հրաժարվելու

ԳԱԱ վերջին նիստից հետո, որտեղ սղասվածին հակառակ Ֆադեյ Սարգսյանը հրաժարական շտվեց, կարծիքներ եղան, թե դա տեղի կունենա մեկ շաբաթ հետո սղասվելիք ընդհանուր ժողովում, որտեղ նորից կհնչեն մեծարանքի խոսքեր ու ԳԱԱ նախագահը մեծահոգաբար տեղը կզիջի մեկ ուրիշին՝ Վիկտոր Համբարձումյանի օրինակով, ստանալով «ԳԱԱ պատվավոր պրեզիդենտի» տիտղոսը: Բայց քանի որ հիշյալ նիստում կառավարության հասցեին որոշակի մեղադրանքներ հնչեցին (մասնավորապես Ֆ. Սարգսյանն ասաց, թե շենքերի վաճառքից ինքը տեղյակ չէ, թույլ չի տվել, բայց կառավարությունն ինքն է որոշել ու վաճառել: Մահացած մարդկանց պատվավճարները կառավարությունն է թույլ տվել ստանալ ու ծախսել: Կառավարությունն է մեղավոր, որ արդեն 6 տարի է՝ ակադեմիայի անդամների ընտրություն չի եղել), լուրեր տարածվեցին, թե Ֆ. Սարգսյանը վարչապետի հետ ընդհարում է ունեցել ու դրա արդյունքում, հենց հաջորդ օրը ճնշումների տակ հրաժարական է տվել: Այս լուրերը երեկ մեզ հետ զրույցում հերքեց Աժ գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանը: Նա դեմ է, որ ԳԱԱ նախկին նախագահին վարկաբեկելով ճանապարհեն. *«մարդուն կարող է կրակելով չսպանես, բայց խոսքով՝ սպանես: Չի կարելի անտեսել, որ Ֆադեյ Սարգսյանը հետք է թողել մեր գիտական կյանքում»:* Իսկ նախագահությանն ուղղված մեղադրանքներին թեեւ լավ ծանոթ չէր, սակայն կարծիք հայտնեց, թե հիմա որ հիմնարկն էլ մտնես՝ թերություններ կգտնես:

Ակադեմիկոս Անրի Ներսիսյանն էլ երեկ ոնդում էր, որ Ֆ. Սարգսյանը իրավունք չուներ հրաժարականը ներկայացնել վարչապետին, իսկ վարչապետն էլ իրավունք չուներ ընդունել այն, որովհետեւ, *«ըստ կանոնադրության, ԳԱԱ նախագահը ենթարկվում է նախագահությանը, հետո՝ ընդհանուր ժողովին եւ հրաժարականի համար նախ պետք է նախագահությանը դիմեր: Ըստ կանոնադրության, կառավարությունը ԳԱԱ հարցերին կարող է միջամտել 2 դեպքում. նախագահի ընտրությունը հաստատելու, մեկ էլ՝ ակադեմիայի անդամների քանակն ու մասնագիտությունը հաստատելու համար: Ճիշտ է, նախագահն ունի նախարարի կարգավիճակ, սակայն դա նրա համար է, որպեսզի կարողանա այդ հանգամանքն օգտագործել ԳԱԱ-ին օգնելու, որոշակի հարցեր լուծելու համար, իսկ ակադեմիան ինքնակառավարվող կազմակերպություն է: Հետեւաբար, նախագահությունն ու ընդհանուր ժողովը կարող են չընդունել հրաժարականը: Նրանք սկզբունքորեն կարող են կասեցնել վարչապետի որոշումը»,-* ասում է պրն Ներսիսյանը: Հր. Հակոբյանի կարծիքով էլ, քանի որ ԳԱԱ նախագահն այսօր նախարարի կարգավիճակ ունի, ուրեմն եւ՝ հրաժարականի համար պետք է դիմեր հենց վարչապետին:

Հ. ԲՈՒԴԱՂՅԱՆ